ԿԱՐԾԻՔ

Ջոն Տիգրանի Սիմոնյանի «Մեղուների վարակիչ հիվանդությունների ուսումնասիրումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺՁ.00.01- «Անասնաբուժություն» մասնագիտությամբ Անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մեղվաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը: Այն զբաղվում է մեղրատու մեղուների բուծմամբ՝ մեղր, մեղրամոմ, ակնամոմ, մեղվակաթ, ծաղկափոշի, մեղվաթույն ստանալու, ինչպես նաև բույսերի խաչաձև փոշոտումն ապահովելու համար:

Ամբողջ աշխարհում մեղվաբուծության զարգացմանը խոչընդոտող գործոններ համարվում են կլիմայական փոփոխությունները, վիրուսային, բակտերիալ, մակաբուծային հիվանդությունները, թունավորումները թունաքիմիկատներով: Այս բոլոր գործոնները նպաստում են մեղվաընտանիքների թվաքանակի և մեղրի բերքատվության նվազմանը:

Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները բարենպաստ են մեղվաբուծության զարգացման համար: Հայաստանի 3-րդ Հանրապետության հռչակումից հետո մեղուների վարակիչ հիվանդությունների տարածվածության վերաբերյալ հետազոտություններ գրեթե չեն իրականացվել և բավարար տվյալներ չկան առկա հիվանդությունների հարուցիչների բնույթի, առաջացման պատճառների, հիվանդությունների զարգացմանը նպաստող գործոնների վերաբերյալ: Հաշվի առնելով այս ամենը անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետությունում կատարել մեղուների վարակիչ հիվանդությունների հետ կապված հետազոտություններ:

Հեղինակի կողմից իրականացվել են մեղուների շրջանում տարածված վարակիչ հիվանդությունների, դրանց հարուցիչների, առաջացման պատճառների, նպաստող գործոնների, տարածվածության վերաբերյալ բավականին ծավալուն հետազոտություններ:

Ատենախոսության շարադրանքը կազմում է 123 տպագիր էջ՝ ներառելով 15 աղյուսակ, 5 գծապատկեր, 7 նկար, 1 քարտեզ: Ատենախոսությունը բաղկացած է՝ ներածությունից, «Գրականության տեսություն», «Նյութեր և մեթոդներ», «Սեփական հետազոտություններ», «Կատարված հետազոտությունների արդյունքների ամփոփում» բաժիններից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, որն ընդգրկում է 136 աղբյուր և 49 էջ կազմող 4 հավելվածներ:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ ՊՌՇ մեթոդով հայտնաբերվել են մեղուների 6 վիրուսային հիվանդությունների հարուցիչներ:

Հետազոտման համար որպես նյութ ծառայել են անկումներ ունեցող տնտեսություններից հավաքված նմուշները՝

- Ախտահարված հայկական դեղին մեղրաբեր մեղուներ, կովկասյան մեղրաբեր մեղուներ, խառնացեղ մեղուներ (հաշվի են առնվել մեղուների միայն ձևաբանական հատկանիշները) , մեղվափեթակներ.
- Հայկական դեղին մեղրաբեր մեղուների, կովկասյան մեղրաբեր մեղուների և խառնացեղ մեղրաբեր մեղուների ախտահարված թրթուրներով մեղրախորիսխներ.
- Վարրոա տզեր, որոնք հիվանդությունների փոխանցողներ են.

Փորձերի համար օգտագործվել են ՊՌՇ իրականացնելու սարք, վիրուսային ՌՆԹ/ԴՆԹ պատրաստման հավաքածու, բակտերիաների նույնականացման թեստ-համակարգեր և այլն:

Հետազոտությունների ընթացքում կատարվել է կլինիկական նշանների վրա հիմնված նախնական ախտորոշում, իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ, լաբորատոր ախտորոշում, ինչպես նաև վիճակագրական տվյալների մաթեմատիկական մշակում:

Սեփական հետազոտությունները իրականացվել են 2019,2022,2023 թվականների ընթացքում: Մեղուների անկումների պատճառները բացահայտելու նպատակով Հայաստանի Հանրապետության 6 մարզերի (Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի) 15 համայնքների 41 բնակավայրերից կատարվել է մեղուների հիվանդությունների վերաբերյալ տվյալների և նյութերի հավաքագրում:

Հետազոտությունների ընթացքում իրականացվել է մեղուների վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական վերլուծություն, կատարվել է հիվանդությունների քարտեզագրում ըստ մարզերի, ճշգրտվել են մեղուների անկման իրական պատճառները և ախտահարված մեղվաընտանիքների քանակը, ուսումնասիրվել է համաճարակաբանական իրավիճակը, հարուցիչների տարածման հնարավոր աղբյուրները և ուղիները, կատատարվել է առաջացած տնտեսական վնասի գնահատում և վերոհիշյալ հիվանդությունների նկատմամբ մշակվել են պայքարի արդյունավետ միջոցառումներ: Մեղվանոցների ախտահարվածության աստիճանը պարզելու նպատակով ուսումնասիրությունները իրականացվել են դաշտային և լաբորատոր պայմաններում:

Որպես ամփոփիչ դրույթներ հեղինակը ներկայացրել է 5 եզրակացություններ և առաջարկություններ, որոնք բխում են ուսումնասիրությունների արդյունքներից:

Ավարտելով Ջոն Տիգրանի Սիմոնյանի թեկնածուական ատենախոսության վերլուծությունը, կուզենայի նշել աշխատանքում տեղ գտած որոշ թերություններ և բացթողումներ.

1. Աշխատանքում կան որոշ ոճաբանական, շարահյուսական և տպագրական սխալներ:

2. Աշխատանքում բացակայում են վարակիչ հիվանդությունների բուժման և կանխարգելման եղանակները:

Չնայած, ատենախոսությունում տեղ գտած որոշ թերությունների և բացթողումների, աշխատանքը ընդհանուր առմամբ արժանի է դրական գնահատականի: Աշխատանքի թեման արդիական է, աշխատանքը ամբողջական է և ավարտուն: Իրականացված հետազոտությունները համապատասխանում են ընտրված թեմային, ատենախոսությունը կազմված է մեթոդապես ճիշտ, առկա նյութը մշակվել է վիճակագրորեն, եզրակացությունները հավաստի են: Պաշտպանությանը ներկայացված ատենախոսության և սեղմագրի ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Ջոն Տիգրանի Սիմոնյանի աշխատանքն ունի գիտագործնական կարևոր նշանակություն:

Ատենախոսության հիմնական դրույթները ներառված են հեղինակի կողմից հրատարակված 4 հոդվածներում:

Վերոնշյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ջոն Տիգրանի Սիմոնյանի «Մեղուների վարակիչ հիվանդությունների ուսումնասիրումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը իր գիտական և արտադրական նշանակությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսության պահանջներին, իսկ հեղինակը արժանի է անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺՁ.00.01 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ :

Պաշտոնական ընդդիմախոս՝

Անասնաբուժական գիտ. թեկնածու, դոցենտ Կ.Ա.Սուքիասյան

Անասնաբուժական գիտ. թեկնածու, դոցենտ Կ.Ա.Սուքիասյանի ստորագրությունը հաստատում եմ ՀԱԱՀ-ի գիտական քարտուղար, գյուղ.գիտ.թեկնածու, դոցենտ՝ Գ.Վ.Ավագյան